ՀԱՅՐ ՋՈՆ ԲՈՆԻՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քրիստոնեական Միությունը խրախուսելու Կենտրոնի աշխատակից Հայր Ջոն Բոնին սեպտեմբերի 12-ից 19-ը այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի հրավերով:

Այցելության նպատակն էր, որքան հնարավոր է, շատ տեղեկություններ քաղել Հայ Առաքելական Եկեղեցու, նրա պատմության, ներկայումս ծավալող գործունեության մասին, ինչպես նաև նախապատրաստել Գրիգոր Լուսավորչի մասունքները Նեապոլից Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու նպատակով Վեհափառ Հայրապետի Հռոմ կատարելիք ճանապարհորդության մասին մանրամասներ:

Այցելության ընթացքում Հայր Բոնիին ուղեկցում էին Ս. Գայանե վանքի վանահայր Ներսեհ աբեղա Խալաթյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի աշխատակիցները:

Մեկշաբաթյա այցելությունների ընթացքում Հայր Բոնին հանդիպում ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ, եղավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական Հարաբերությունների Գրասենյակում, ապա Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում, ուր ՔԴՔԿ-ի տնօրեն Մակար վարդապետ Հովհաննիսյանը ծանոթացրեց կենտրոնի ծավալած կրոնա-դաստիարակչական աշխատանքներին և հրատարակչական գործունեությանը:

Ի թիվս այցելությունների, նա եղավ Նորքի Հայորդյաց Տանը, Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Սևանի Վազգենյան Դպրանոցում, ուր մասնակցեց ուսումնական տարվա բացման հանդիսավոր ցերեկույթին:

Լինելով Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ՝ հայր Բոնին այցելեց Գյումրիում գտնվող կաթոլիկ համայնքին:

Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր մշակույթին ավելի ծանոթանալու նպատակով նա այցելեց մի շարք եկեղեցիներ և վանքեր, եղավ Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե վանքերում, զրուցեց հոգևորականների և պաշտոնեության հետ, եղավ Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Ծիծեռնակաբերդում, Երևանի Պատմության և Էրեբունիի թանգարաններում:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ